Ավետիք Իսահակյան

Ասպետի սերը

Հին ժամանակ իր ամրոցում ոսկեղեն
Կրբնակվեր հուր ու հրաշք մի աղջիկ.
Ու կսպասեր, որ հեռավոր տեղերեն
Իր երազի ասպետը գար գեղեցիկ:
Եվ ձին հեծած, բանակներով հաղթազեն,
Եկավ մի օր կանաչ-կտրիճ մի իշխան...
Սանձը ձգեց, ու քար կտրեց հիացքեն,
Երբ որ տեսավ պատշգամբում աղջկան:

-Հրաշք-աղջի՛կ, թագավորիս զորքերով
Կես աշխարհը դրոշակիս տակն առա.
Քեզ սիրեցի, սիրտդ տուր ինձ, քո սիրով
Մյուս կեսն էլ տիրեմ, բերեմ քեզ ընծա:

-Այդ ի՜նչ սեր է, ասաց աղջիկն ասպետին,
Քաջ ես, գիտե՛մ, գիտե՛մ, չկա քեզ նման.
Դու կարող ես տիրեյ արար-աշխարհին,
Բայց այդ երբե՛ք հզոր սիրտ չէ՛ նշան:

-Ինչպե՜ս հայտնեմ սրտիս հուրը, նազելի՛ս.
Կուզե՞ս պատռեմ կուրծքս հիմա այս սրրով,
Ոտներիդ տակ նետեմ սիրտս սիրով լի,
Մեռնիմ ուրախ ու բախտավոր՝ քո սիրով:

-Այդ չէ՛ սերը, ասաց աղջիկն ասպետին,
Գիտե՛մ, քաջ ես, բայց շա՜տ վախկոտ, թույլեր կան,
Որ հուսահատ՝ քաջի նման կըմեռնին,
Բայց այդ երբեք անշեջ սիրու չէ՛ նշան:

Ու կտրիճը մնաց մոլոր ու շվար,
Աչքերն հանգած՝ լույս-երեսին աղջկա.
-Ի՜նչ որ կուզես, ասա՛, անեմ քեզ համար,
Արևի տակ իմ սիրուս պես սեր չկա:

-Թե կսիրես, թո՛ղ ինձ հիմա ու գնա՛,
Ու ականջ դի՛ր, մի օր դուռդ կըբախեմ:
Այսպես ասաց, ու իր ծոցեն մարմարյա
Նետեց նրան մի հատիկ վարդ հրեղեն:

Ասպետն առավ վարդը, քնքո՛ւշ համբուրեց,
Վերջին անգամ նայեց, նայեց սիրածին:
Սիրու վարդը պահեց այրվող ծոցի մեջ.
Ու խթանեց, ու սլացավ նժույգ-ձին:

Եվ նստել է ամրոցի մեջ մեն-մենի
Այն իշխանը երազներում երջանիկ,
Վարդը ծոցում, ու ականջը մի ձենի...
Եվ թև առան, թռան օրեր ու տարիք:

Աչքերը գոց՝ պատած ոսկի մշուշով,
Ուր կըժպտար սեր-աղջիկը աննման,
Քաջ ասպետը բոց կարոտով, լի հույսով
Սիրտը ձենի՝ լուռ սպասեց աղջկան...
Եվ թև առան, թռան օրեր ու տարիք,
Վառ կտրիճը դառավ դողդոջ մի ծերուկ,
Ու երբ մահը դուռը բախեց զարհուրիկ,
Հանեց ծոցեն վարդը խամրած ու դալուկ:

Սիրու վարդը աչքին դրեց փափագով,
Ու համբուրեց, ու համբուրեց, ու... մեռավ՝
Հոգին լցված բլբուլների երգերով.
Եվ զրույցս էլ ա՛յսպես տխուր վերջացավ...